



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ


Խմբագրություն: 7

Ուժի մեջ է՝ 14.06.2024թ.

Տպագիր ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել: Տպագիր ամփոփագրի պայմանները կայքում հրատարակված գործող պայմաններից տարբերվելու դեպքում անհրաժեշտ է դիմել մասնաճյուղ կամ առաջնորդվել կայքում առկա տարբերակով: Ամբողջական պայմանները՝ <https://www.ardshinbank.am/content/տիպիչայի-փ-320-և-322-հասցեներում-գտնվող-բնկալի-շենքերում-կառուցման-ընթացքում-գտնվող-և-կամ/> հղմամբ:

ՀՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿ – Հանրային ծառայողներին մատչելի բնակարան ծրագրի շրջանակներում անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկերի տրամադրման պայմաններ՝ Առնո Բաբաջանյան 42/5 նախագիծ

Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Հայտի և փաստաթղթերի ընդունման վայր	Բանկի բոլոր մասնաճյուղեր, Գլխամասային գրասենյակ
Վարկի ֆինանսավորման աղբյուր	«Արդշինբանկ» ՓԲԸ
Վարկի նպատակ	ՄԼ. Մայնինգ ընկերության կողմից ՀՀ ք. Երևան Առնո Բաբաջանյան 42/5 հասցեում բնակելի շենքերում կառուցման ընթացքում գտնվող բնակարանների և ավտոկայանատեղիի (այսուհետ միասին կամ առանձին հիշատակման դեպքում անշարժ գույք) ձեռքբերում
Վարկի նվազագույն գումար	Չի սահմանվում
Վարկի առավելագույն գումար	1. Ձեռքբերվող բնակարանի դեպքում- 150.000.000 ՀՀ դրամ (ոչ ավել, քան ձեռք բերվող բնակարանի համար ձեռքբերման արժեքի 90%-ը) 2. Ավտոկայանատեղիի դեպքում՝ 2.800.000 ՀՀ դրամ
Տարեկան տոկոսադրույք հաստատուն/ հաստատուն(ճշգրտվող)*	1. Մինչև 35.0 մլն (ներառյալ) ՀՀ դրամի դեպքում՝ 13% 2. 35.1 և ավել ՀՀ դրամի դեպքում՝ 13.6%
Տարեկան տոկոսադրույք լողացող**	1. Մինչև 35.0 մլն (ներառյալ) ՀՀ դրամի դեպքում՝ ՀԴ+2% 2. 35.1 և ավել ՀՀ դրամի դեպքում՝ ՀԴ+2.5%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	12.1 - 14.5%
Նվազագույն ժամկետ	10 տարի
Առավելագույն ժամկետ	20 տարի
Վարկի և տոկոսագումարի մարումներ	Ամենամսյա հավասարաչափ վճարումներ (անուիտետ)
Նվազագույն կանխավճար բնակարանի ձեռքբերման արժեքից	10%
Նվազագույն կանխավճար ավտոկայանատեղիի արժեքից	20%
Վարկային հայտի ուսումնասիրության վճար	Չի սահմանվում
Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար ⁴	Չի սահմանվում
Վարկի ամսական սպասարկման վճար	Չի սահմանվում

	Վարչության 2024թ. հունիսի 11-ի թիվ 01/042-246 L որոշում	Էջ 2 / 6
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 7
		Ուժի մեջ է՝ 14.06.2024թ.

Գույքի ձևակերպման համար այլ կատարվող վճարներ	1. Վարկառուն վճարում է՝ 1) գնման իրավունքի, 2) Գրավի պայմանագրերի նոտարական վավերացման, 3) Կառուցապատման ավարտից հետո՝ - վարկառուի սեփականության և - Բանկի գրավի իրավունքների կադաստրային պետական գրանցման համար:
Բանկային հաշվի բացում	Համաձայն Բանկում գործող Բանկային հաշիվների բացման և սպասարկման սակագների ու պայմանների
Քաղվածքների տրամադրում	Անվճար՝ մինչև 1 ամիս կտրվածքով քաղվածք, Անվճար՝ տարեկան առնվազն չորս անգամ, վարկառուի պահանջով՝ վերջինիս կողմից նշված ժամանակահատվածի համար, 1000-5000 ՀՀ դրամ՝ այլ ժամանակահատվածով քաղվածքներ և տեղեկանքներ (տես՝ https://www.ardshinbank.am/content/բանկային-հաշիվ/):
Ապահովագրություն	չի պահանջվում
Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցություն	1. Կառուցվող բնակարանի ձեռքբերման արժեքի 90% 2. Ավտոկայանատեղիի ձեռքբերման արժեքի 80 %
Վարկ/Գրավ առավելագույն հարաբերակցության հաշվարկում Անշարժ գույքի արժեքի հաշվարկ	ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից Վարկառու-շահառուին տրամադրված բնակարանի և ավտոկայանատեղիի գնման իրավունքի պայմանագիր կնքելու առաջարկում (անհետևանջելի օֆերտա) նշված արժեք
Վարկի տրամադրման կարգը բնակարանի դեպքում	Միանվագ
	Փուլային՝ 2 մասնաբաժնով՝ 1-ին փուլ՝ ձեռքբերվող բնակարանի կողմնորոշիչ գնի առավելագույնը 70 տոկոսը 2-րդ փուլ՝ ձեռքբերվող բնակարանի կողմնորոշիչ գնի 20 տոկոսը
Վարկի տրամադրման կարգը՝ Ավտոկայանատեղիի դեպքում	Միանվագ
Վարկի տրամադրման եղանակ	անկանխիկ՝ Բանկային հաշվին փոխանցմամբ
ՎԱՐԿԱՌՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ	
Վարկառուի կարգավիճակ	Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում անշարժ գույքի գնման իրավունքի ձեռքբերման պայմանագիր կնքելու օֆերտայում նշված անձ՝ շահառու կամ ընտանիքի անդամ, ում տարիքը վարկի մարման վերջնաժամկետին չպետք է գերազանցի 65-ը (մինչև 66

	Վարչության 2024թ. հունիսի 11-ի թիվ 01/042-246 L որոշում	Էջ 3 / 6
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 7
		Ուժի մեջ է՝ 14.06.2024թ.

	տարեկանը լրանալը):
Համավարկառուին ներկայացվող պահանջներ	1. Համավարկառուին կարող են հանդիսանալ 18 տարին լրացած վարկառուի ազգականները (ազգական են համարվում այն անձիք, ովքեր պատրաստ են ծառայողի բնակարանի ձեռքբերման համար մասնակցել գնման ֆինանսավորմանը՝ ներառյալ հիփոթեքային վարկի միջոցով), 2. Համավարկառուներից առնվազն մեկի տարիքը վարկի տրամադրման պահին չպետք է գերազանցի 60 տարեկանը (մինչև 61 տարեկանը լրանալը): 3. Պահանջը չի կիրառվում, եթե համավարկառու իր եկամուտներով և պարտավորություններով մասնակցություն չի ունենում վարկի հաստատմանը:
Հաճախորդի վարկաթանության գնահատման ընդհանուր սկզբունքը	Ընդհանուր պարտքային վճարումների և զուտ եկամուտների առավելագույն հարաբերակցությունը (ԸՊԵ) չպետք է գերազանցի 60
Վարկառուին և համավարկառուին ներկայացվող այլ պահանջներ	Բջջային հեռախոսահամարի և էլեկտրոնային փոստի հասցեի առկայություն

ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ապահովվածություն	Գնման իրավունքի պայմանագրով վաճառող-պետության հանդեպ Վարկառու-շահառուի ունեցած իրավունքների (ներառյալ պետությանը կատարվող կանխավճարների պահանջի իրավունքը) գրավ, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումից հետո՝ անշարժ գույքի գրավ
------------------	---

ՏՈՒՅԺԵՐ, ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում	24% տարեկան՝ ժամկետանց վարկի նկատմամբ
Ժամկետանց տոկոսագումարի դիմաց տույժ	48% տարեկան
Վարկի վաղաժամկետ մարման տույժ	Չի սահմանվում

ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ, ԳՈՐԾՈՆՆԵՐ

Որոշման կայացման ժամկետ	4-7 օր
Որոշման մասին տեղեկացման ժամկետ	1 օր
Տրամադրման ժամկետ	1. Միանվագ տրամադրման դեպքում վարկը տրամադրվում է ոչ ուշ, քան անշարժ գույքի գնման իրավունքի պայմանագրի կնքումից հետո 7-րդ աշխատանքային օրը՝ գնման իրավունքի և գրավի վկայականները Բանկ ներկայացնելու դեպքում 2. Փուլային տրամադրման դեպքում 1-ին փուլ - ոչ ուշ, քան անշարժ գույքի գնման իրավունքի պայմանագրի կնքումից հետո 7-րդ աշխատանքային օրը՝ գնման իրավունքը և գրավի վկայականը Բանկ ներկայացնելու դեպքում 2-րդ փուլ - ոչ ուշ, քան շենքի (մասնաշենքի) կառուցման ավարտը պետական գրանցման ենթարկվելու մասին Քաղաքաշինության կոմիտեի կողմից Բանկի



ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Խմբագրություն: 7

Ուժի մեջ է՝ 14.06.2024թ.

	ձանուցումն ստանալուց հետո 15-րդ օրը
Դրական որոշման գործոններ	վարկավորման պայմանների համապատասխանություն և պահանջվող փաստաթղթերի պատշաճ ներկայացում
Վարկի մերժման գործոններ	Վարկառուի/համավարկառուի բացասական վարկային պատմություն, թերի ներկայացված փաստաթղթեր, հաճախորդի անբավարար վարկարժանության գնահատական

Վարկերը տրամադրվում են Բանկի կողմից հաստատված տիպային պայմանագրերի կիրառմամբ: Ավտոկայանատեղիի ձեռքբերման և գրավադրման դեպքում ավտոկայանատեղիի համար ստորագրվում է առանձին վարկի և գրավի պայմանագրեր: Գրավի պայմանագիրը (պայմանագրերը) պետք է վավերացվի նոտարական կարգով: Բնակարանի (ավտոկայանատեղիի) նկատմամբ գնման իրավունքի գրավը, կառուցապատման ավարտից հետո՝ սեփականության և Բանկի գրավի իրավունքները և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման հաճախորդի կողմից և Բանկ ներկայացման:

Վարկառուն պարտավոր է կառուցապատողի կողմից շինարարության շահագործման հանձնման ակտը կազմելուց հետո 60 օրվա ընթացքում Բանկ ներկայացնել ձեռքբերվող անշարժ գույքի 100%-ոց ավարտվածությամբ սեփականության և գրավի վկայականները: Գույքի 100%-ոց ավարտվածությամբ սեփականության և գրավի վկայականները չներկայացնելու դեպքում 60 օրացուցային օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում վարկի պայմանները վերանայվում են և պայմանագրով սահմանված տոկոսադրույքը բարձրացվում է 3% -ով (բացառությամբ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերի):

Ավտոկայանատեղիի (ավտոկայանատեղիի գնման իրավունքի) ձեռքբերման նպատակով վարկը տրամադրվում է միայն տվյալ ծրագրի շրջանակներում բնակարանի (բնակարանի գնման իրավունքի) միաժամանակյա ձեռքբերման դեպքում:

*Հաստատուն (ճշգրտվող) տոկոսադրույքով տրամադրվող վարկերի տոկոսադրույքները վերանայվում են՝ սկսած վարկային պայմանագրի գործողության 37-րդ ամսից՝ Հաշվարկային դրույքի (ՀԴ) փոփոխման դեպքում: Վարկային պայմանագրի գործողության ընթացքում վարկի տոկոսադրույքը վարկի տրամադրման ժամանակ սահմանված տոկոսադրույքի համեմատ չի կարող բարձրանալ կամ իջնել ավելի քան 2.5 տոկոսային կետով:


Վարկի Հաշվարկային դրույքի (ՀԴ) արժեքը հավասար է վարկի տրամադրման վերաբերյալ որոշման կայացման պահին Բանկում գործող ՀԴ արժեքին:

**Հաշվարկային դրույքը (ՀԴ) հարապարակվում է Բանկի www.ardshinbank.am կայքում, Բանկի կողմից վերանայվում է յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ին և օգոստոսի 1-ին: Կնքված պայմանագրերի գծով տոկոսադրույքերը վերանայվում են ՀԴ փոփոխությունից մեկ ամիս հետո (եթե ձանուցման մեջ ավելի երկար ամսաթիվ սահմանված չէ)՝ Հաշվարկային դրույքի փոփոխված լինելու դեպքում: Տոկոսադրույքերը փոփոխվում՝ բարձրացվում կամ նվազեցվում են ՀԴ փոփոխության չափով:

Վարկային պայմանագրի գործողության ընթացքում վարկի տոկոսադրույքը վարկի տրամադրման ժամանակ սահմանված տոկոսադրույքի համեմատ չի կարող բարձրանալ կամ իջնել ավելի քան 2.5 տոկոսային կետով:

ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Ժամանակահատված	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Գործող	9.5%	4.0%
01.02.2024-31.07.2024 թթ.	9.5%	4.0%
01.08.2023-31.01.2024 թթ.	9.5%	4.0%
01.02.2023-31.07.2023 թթ.	9.5%	4.0%
08.08.2022-31.01.2023 թթ.	9.5%	4.0%
01.02.2022-07.08.2022թթ.	8.5%	4.0%
03.08.2021-31.01.2022թթ.	7%	4.5%

	Վարչության 2024թ. հունիսի 11-ի թիվ 01/042-246 Լ որոշում	Էջ 5 / 6
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 7
		Ուժի մեջ է՝ 14.06.2024թ.

01.02.2021-02.08.2021թթ.	6.0%	4.0%
--------------------------	------	------

³Կառուցվող անշարժ գույքը վերջնական շահագործման հանձնելուց ու գույքի նկատմամբ գնորդի սեփականության ու բանկի գրավի իրավունքի վկայագրերը Բանկ ներկայացնելուց հետո (ավարտվածություն՝ 100%), գրավի առարկա է հանդիսանում ձեռք բերվող անշարժ գույքը:

Ձեռք բերվող բնակարանի և ավտոկայանատեղի կառուցապատման ավարտից հետո՝ մինչ փոխանցման ակտի ստորագրումը, բնակարանի գրանցված մակերեսից ելնելով միավորի գնի և միավորի կողմնորոշիչ գնի միջև դրական տարբերություն առաջանալու դեպքում այդ տարբերության լրավճարման (բնակարանի գնի և բնակարանի կողմնորոշիչ գնի տարբերություն) նպատակով վարկառու-շահառուի դիմումի համաձայն վերջինիս կարող է տրամադրվել վարկ սույն պայմաններով: Ընդ որում, լրավճարման գումարի հաշվարկի համար հիմք է հանդիսանում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից Բանկին համապատասխան գույքի համար ներկայացված տեղեկանքում նշված գույքային միավորի գինը:

ԿԱՐԿՈՐ Է ԻՄԱՆԱԼ

ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐԵԼ (ՄԱՐԵԼ) ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՎՃԱՐՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓՈՎ ԿՆՎԱԶԵՑՎԻ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԸ, ՀԱՄԱՄԱՍՆՈՐԵՆ ԿՆՎԱԶԵՑՎԻ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԸ. ՏՎՅԱԼ ԴԵՊՔՈՒՄ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԻՑ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԵՆ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎՈՂ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄՆԱՅՈՐԴԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵԳՐՎՈՂ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐԸ: ԸՆԴ ՈՐՈՒՄ՝ ՍՈՒՅՆ ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱՆԿԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԿԻՐԱՌԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ:

Վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում վարկառու կարող է զրկվել ձեռք բերվող և գրավադրվող գույքի նկատմամբ իր իրավունքներից:

Գրավի հաշվին վարկային պարտավորությունների ամբողջական չմարման դեպքում պարտավորությունների ամբողջական մարումը կկատարվի վարկառուի և գրավատուների այլ միջոցների և գույքերի հաշվին:

Ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում մարումները կատարվում են հետևյալ հերթականությամբ՝ սահմանված կարգով գրավադրված գույքի բռնագանձման հետ կապված Բանկի կողմից կատարված ծախսերը և վարկային պայմանագրերի շրջանակներում ձևավորված Բանկի նկատմամբ Վարկառուի և/կամ Համավարկառուի այլ դեբիտորական պարտավորությունները, ժամկետանց տոկոսի վրա հաշվարկված (կուտակված) տուժանքի գումար, ժամկետանց Վարկի վրա հաշվարկված (կուտակված) տոկոսագումար, հաշվարկված (կուտակված), սակայն չվճարված ժամկետանց տոկոսագումար, ժամկետանց Վարկի գումարը, վարկի սպասարկման վճարը, Վարկի օգտագործման համար հաշվարկված (կուտակված) ժամկետային տոկոսագումարը, Վարկի գումարը:

Դրամական պարտավորությունների կատարման հերթականությունը կարող է փոխվել Բանկի հայեցողությամբ՝ առանց Վարկառուին և/կամ Համավարկառուին տեղեկացնելու:

Բանկը պարտավորվում է պայմանագրի առաջարկը յոթ օր առաջ տրամադրել հաճախորդին և յոթ օր մտածելու ժամանակ ընձեռել:

Բանկի ՄՈՐԱՅԼ ԲԱՆԿԻՆԳ հավելվածի միջոցով հնարավոր է իրականացնել դրամային փոխանցումներ, կատարել վարկի մարումներ, դիտել հաշիվների մնացորդներն ու գործարքները, կատարել վճարումներ և բազմաթիվ այլ գործարքներ, որոնց կարող եք ծանոթանալ <https://www.ardshinbank.am/content/մոբայլ-բանկինգ> հղմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝

	Վարչության 2024թ. հունիսի 11-ի թիվ 01/042-246 Լ որոշում	Էջ 6 / 6
	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	Խմբագրություն: 7
		Ուժի մեջ է՝ 14.06.2024թ.

Վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը ձեզ համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել Բանկի պաշտոնական www.ardshinbank.am կայքէջում:

Գնահատող կազմակերպությունների ցանկին կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ձեր ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՈՒՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵՔ ԶԵՐՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:

Ձեր ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:

ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:

ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ ԵՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ: